Արձանագրություն 2

**ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-22/9» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.11.2022թ. ժամը 16:00-ին:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

**Վ. Հարությունյան** – ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության պետ,

***Անդամներ***

**Վ. Պողոսյան** – ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ,

**Հ. Ղազարյան** - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

**Ա. Մարտիրոսյան** - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

**Կ. Սիրունյան** – ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի տնտեսվար,

***Գնումները համակարգող***

**Ա. Աղաբաբյան** - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

1. **Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդ աշխատանքային օրը ժամը 16:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

2. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին***

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-22/9» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|
| «ՄՏՏ Հայաստան» ՓԲԸ | էլ հասցե՝ a.izrailyan@gmail.com |
| «Յուքոմ» ՓԲԸ | ՀՎՀՀ՝ 00024873, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթ 8/4, էլ հասցե՝ corporate@ucom.am, հեռ.՝ +37495555054 |
| «Քրոսնեթ» ՓԲԸ | ՀՎՀՀ՝ 01834381, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 7, գր. 3, էլ հասցե՝ cross@cross.am, հեռ.՝ +37415500500 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

Հաշվի առնելով, որ բացառությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մյուս մասնակիցների հայտերը մերժվում են՝ հանձնաժողովի կողմից գնահատվել է միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «ՄՏՏ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ «ՄՏՏ Հայաստան» ՓԲԸ-ն չի ներկայացրել հրավերով պահանջվող հավելված 1-ը՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը: Բացի այդ, մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում որպես ամբողջ պայմանագրի կատարման գին նշվել է 8736 դրամը: Գնային առաջարկով յուրաքանչյուր հեռախոսահամարի ամսական բաժանորդավճար է նշվել 600 դրամը: Միաժամանակ, հրավերով նախատեսված է համապատասխան ծառայությունների մատուցում առավելագույնը 300 հատ հեռախոսահամարի համար:

Փաստացի, «ՄՏՏ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից առաջարկված պայմանագրի գինը կարող է բավարարել մոտ 14 հեռախոսահամարի միայն մեկ ամսվա բաժանորդավճարը վճարելու համար: Ներկայացված գնով պայմանագրի կնքելու դեպքում պատվիրատուն չի կարողանա ամբողջ ծավալով վճարել իրեն մատուցած ծառայությունների դիմաց, ինչն էլ կարող է հանգեցնել հեռախոսակապից օգտվելու հնարավոր բարդություններին և անկանխատեսելի ռիսկերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

1. «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-22/9» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացվում են հավելված 1-ում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. **Հանձնաժողովի կայացրած որոշումները**

Հանձնաժողովը որոշեց

1. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

2. «Յուքոմ» ՓԲԸ-ի և «Քրոսսնեթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժել:

3. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | ____________ | Վ. Հարությունյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | ____________ | Վ. Պողոսյան |
| | ____________ | Հ. Ղազարյան |
| | ____________ | Ա. Մարտիրոսյան |
| | ____________ | Կ. Սիրունյան |
| Գնումները համակարգող՝ | ____________ | Ա. Աղաբաբյան |

Հավելված 1

| Հ/Հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «ՄՏՏ Հայաստան» ՓԲԸ | | | | | | «Յուքոմ» ՓԲԸ | | | | | | «ՔրոսՆեթ» ՓԲԸ | | | | | |
| | | Արժեք /ՀՀ դրամ/ | | ԱԱՀ /%/ | | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | | Արժեք /ՀՀ դրամ/ | | ԱԱՀ /%/ | | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | | Արժեք /ՀՀ դրամ/ | | ԱԱՀ /%/ | | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | |
| | | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ |
| 1 | Հանրային հեռախոսային ծառայություններ<br>/նախահաշվային գին՝ 10 452 600 ՀՀ դրամ/ | 7280 | 7280 | 20 | 20 | 8736 | 8736 | 8 708 750 | 8 708 750 | 20 | 20 | 10 450 500 | 10 450 500 | 8 500 000 | 8 500 000 | 20 | 20 | 10 200 000 | 10 200 000 |